



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

26 հուլիսի 2024 թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:  
Բացակա էին՝ Ձոնիկ Հարությունյանը, Կարեն Մանուկյանը, Հրանտիկ Մելիքյանը, Միեր  
Ներսիսյանը, Գարեգին Շաբոյանը, Հերմինե Վարդանյանը

#### Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Կարապետ Հակոբյանը, Նաիրա Հարությունյանը, Սրբուհի Մելիքյանը, Գոհար  
Խաչատրյանը, Լիլիթ Գասպարյանը, Թամարա Գյաղուկյանը:

#### Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արտուր Մանուկյանը

#### Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Համլետ Ավետիսյանը

Լսեցին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ

### ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

### ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### /Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի  
ավագանին **որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024  
թվականի հուլիսի 26-ի թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի կողմից 2024  
թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Աշոցք համայնքի հողային հաշվեկշիռն համաձայնություն տալու մասին /զեկուցող  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող  
Ա. Մանուկյան/:
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հաղորդումը  
համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին /զեկուցող  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող  
Ա. Մանուկյան/:
- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքների սուբվենցիաների  
տրամադրման 2025 թվականի ծրագրին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Աշոցք համայնքի կողմից մասնակցության հայտ ներկայացնելու առաջարկությանը  
համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական  
սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում  
քաղաքացի Տիգրան Սերգեյի Կոնյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական  
ճանաչված և համայնքի սեփականությունը համարված ավտոտնակը և նրա պահպանման ու  
սպասարկման համար նախատեսված հողամասը ուղղակի կարգով կառուցապատողին  
վաճառելու համար համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի  
Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա.  
Մանուկյան/:



5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 08-075-0018-0009 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող քաղաքացիներ Արմենուհի Ժուլբերտի Աբրահամյանի և Կարեն Հովսեփի Թիրթոյանի սեփականության իրավունքը ճանաչված բնակելի շինությունների զբաղեցրած հողամասի սահմանված չափից ավելի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում կրթահամալիրի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում 2024 թվականի հունիսի 3-ից 7-ը իրականացված իրավական հսկողության արդյունքների մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Հերմինե Հրաչիկի Վարդանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Մհեր Լյովայի Ներսիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Հրանտիկ Հայկազի Մելիքյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին փոխարինող Ա. Մանուկյան/:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵՎԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ  
ՀԱՇՎԵԿՇՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ  
/Ձեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝** Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի հողային հաշվեկշիռին՝ ըստ հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների՝ համաձայն հավելված N1, N2-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/



Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համաձայն հավելված N1, N2, N3-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

Համաձայնություն տալ «Աշոցք համայնքի Աշոցք, Մեծ Սեպասար, Ղազանչի, Զույգաղբյուր, Մուսայեյան, Կրասար, Սիզավետ բնակավայրերում խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ», «Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի 1-ին փողոց 1-ին անցուղու և հինգ բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ», «Աշոցք համայնքի Կրասար, Սիզավետ, Սարազյուղ, Հարթաշեն, Գոգհովիտ, Բաշադյուղ և Մուսայեյան բնակավայրերի փողոցների տուֆ քարով սալարկում», «Աշոցք համայնքի Փոքր Սարիար, Կաքավասար, Թավշուտ, Սիզավետ, Զույգաղբյուր, Սալուտ և Արփենի բնակավայրերում լուսավորության համակարգի կառուցում», «Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրում ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Յողամարգ, Կարմրավան և Զույգաղբյուր բնակավայրերի բնական գազի ներքին ցանցի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի երկու բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի մշակույթի տան և Վարդաղբյուր բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգում», և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի կարիքների համար կոմունալ բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում» սուբվենցիոն ծրագրային հայտերով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների 2025 թվականի ծրագրին մասնակցության հայտեր ներկայացնելու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



**ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻ ՏԻԳՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ ԿՈՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ  
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ  
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ  
/ԶԵԿ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնական շինությունն իրականացրած քաղաքացի՝ Տիգրան Սերգեյի Կոնդյանը, իր 2024 թվականի հուլիսի 14-ի դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0020-0088 կադաստրային ծածկագրով 0.002607 հեկտար հողամասի վրա ինքնական կառուցված ավտոտնակի և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0020-0088 կադաստրային ծածկագրով 0.002607 հեկտար հողամասը և նրա վրա ինքնական կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 21.75 քառակուսի մետր ներքին և 26.07 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 1-ին փողոց, 3-րդ փակուղի ավտոտնակ 4/4, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 04072024-08-0023) ուղղակի կարգով 17670 (տասնյոթ հազար վեց հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օտարել ինքնական շինությունն իրականացրած ֆիզիկական անձ, քաղաքացի՝ Տիգրան Սերգեյի Կոնդյանին (հետագայում քաղաքացի) (անձնագիր՝ AS0462677, տրված՝ 25.18.2018թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 2-րդ անցուղի, շենք 3, բնակարան 3):
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0  
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՋԱՆՉԻ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 08-075-0018-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԺՈՒԼԲԵՐՏԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԵՆ  
ՀՈՎՍԵՓԻ ԹԻԹՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՔԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
/ԶԵԿ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետի և 2-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**



1. Քաղաքացիներ Արմենուի ժուլերտի Աբրահամյանի և Կարեն Հովսեփի Թիթոյանի սեփականության իրավունքը ճանաչված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայրի 1-ին փողոց, բնակելի տուն 11 հասցեավորմամբ բնակելի նշանակությամբ շինություններով զբաղեցված հողամասի սահմանված չափից՝ 1000 քառակուսի մետրից ավելի օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 1751.55 քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արմենուի ժուլերտի Աբրահամյանին և Կարեն Հովսեփի Թիթոյանին:
2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը հաստատել կադաստրային արժեքի չափով՝ 248720 (երկու հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր և օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում 2024 թվականի հուլիսի 12-ին տեղի ունեցած՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրի 144 աշակերտի համար նախատեսված և 80 տեղանոց մանկապարտեզով կրթահամալիրի կառուցման նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային առաջին քննարկման» արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «Մալաք» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա բնակավայրում 144 աշակերտի համար նախատեսված և 80 տեղանոց մանկապարտեզով կրթահամալիրի կառուցման աշխատանքներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՑ 7-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի հունիսի 28-ի N01//05967-2024 գրությամբ ներկայացված առաջարկությունները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման



նկատմամբ 2024 թվականի հունիսի 3-ից 7-ը իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2024 թվականի հունիսի 17-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունում նշված խախտումներն ընդունել ամբողջությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝

1) Միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2024 թվականի հունիսի 17-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունում նշված խախտումները վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետում տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի վրա:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1485-Ն որոշման դրույթներով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ 09-Ն հրամանով հաստատված հավելվածի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2024 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչափերը հաստատելու մասին» N 76-Ա որոշման վերնագրից և բովանդակությունից հանել 2024 թվականի թիվը և բառը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2024 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույթաչափերը հաստատելու մասին» N 76-Ա որոշման հավելված N3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀԵՐՄԻՆԵ ՀՐԱՋԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի



Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ 2024 թվականի հունիսի 3-ից 7-ը իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2024 թվականի հունիսի 17-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Հերմինե Հրաչիկի Վարդանյանի լիազորությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանում գումարված թվով 7 նիստերի կեսից ավելին անհարգելի պատճառով բացակայելու հիմքով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման առաջին կետով սահմանված գործառույթների իրականացումը և սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հերմինե Հրաչիկի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-0 Դեմ-9 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է.

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՄՀԵՐ ԼՅՈՎԱՅԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ 2024 թվականի հունիսի 3-ից 7-ը իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2024 թվականի հունիսի 17-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Մհեր Լյովայի Ներսիսյանի լիազորությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանում գումարված թվով 7 նիստերի կեսից ավելին անհարգելի պատճառով բացակայելու հիմքով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման առաջին կետով սահմանված գործառույթների իրականացումը և սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մհեր Լյովայի Ներսիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-0 Դեմ-9 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է.

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ**



**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀՐԱՆՏԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ 2024 թվականի հունիսի 3-ից 7-ը իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2024 թվականի հունիսի 17-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Հրանտիկ Հայկազի Մելիքյանի լիազորությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու մեկ հերթական նստաշրջանում գումարված թվով 7 նիստերի կեսից ավելին անհարգելի պատճառով բացակայելու հիմքով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման առաջին կետով սահմանված գործառույթների իրականացումը և սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրանտիկ Հայկազի Մելիքյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-0 Դեմ-9 Ձեռնպահ-0  
Որոշումն ընդունված է.

Ավագանու անդամներ  
ՄԱՐԳԱՐԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ՄԱՐՏՈՒՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ  
ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
ԳԵՂԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ  
ԼԻԱՆՆԱ ՀԱՅԿՅԱՆ  
ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ  
ԹԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ  
ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Նիստի արձանագրեց Համլետ Ավետիսյանը